

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴՈՒՁԻԱՅԻ
ՏԻԵՋԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄՈԴԵԼԸ

50-ական թվականներից հետո այն, ինչ կատարվում էր ֆրանսիական ժամանակակից բանաստեղծության մեջ, վստահաբար կարելի էր անվանել զլոբալ ապակառուցում, որին ենթակա էին բանաստեղծական գործառույթի թե <<արտաքին>>, թե <<ներքին>> բաղադրիչները բանաստեղծի ներաշխարհից մինչև բանաստեղծության ժանրային տարբերակումները:

Ի դեպ, հենց ժանրային հստակեցումները դարձան ժամանակակից ֆրանսիական պոեզիայի հիմնական խոչընդոտը, որից ձերբազատվելու նպատակով հստակ ժանրային անվանումներին փոխարինելու եկան <<գրվածք>> L'écriture, <<կերտվածք>> La creature ձևակերպումները:

Այդ տերմինաբանության փոփոխության մեջ կար երկու միտում.

1/ Նվազեցնել մարդու դերը՝ իբրև բանաստեղծության սուբյեկտի և օբյեկտի, ընդլայնելով բանաստեղծության շրջանակները մինչև բանաստեղծության, բառաստեղծման և աշխարհաստեղծման բացարձակ նույնականացում:

2/ Ժանրային և կոմպոզիցիոն ավանդական ձևերի <<չեզոքացման>> հետ մեկտեղ բանաստեղծության մեջ իշխանություն էր հաստատում գեղագիտական միեմալիզմը, որի արդյունքում բանաստեղծական արտահայտչականությունը ազատվում էր որակումներից, զգացմունքներից և մտավարժանքներից:

Այս զարգացումներն անմիջապես իրենց ակորդադարձն ունեցան այդ <<նոր>> բանաստեղծության բառապաշարի վրա, որը սարբեր և բազմաբանակ բանաստեղծների մոտ զարմանալիորեն նույնական էր, քանի որ հենց բառերի ընտրության, գործածման և մեկնության վրա էր հիմնվում նոր բանաստեղծությունը: Սա յուրօրինակ <<անտի-օմանտիզմ>> էր, որ անհատին դուրս էր մղում բանաստեղծական գործընթացից և ապաստանականացման /depersonalization/ մեջ տեղադրում էր նոր համակարգ, որի հիմնական առանձնահատկությունը <<կենտրոնի>> կամ <<առանցքի>> բացակայությունն էր: Այսպես,

ֆրանսիացի հայտնի բանաստեղծ Ֆրանսուա Դուիդը իր բանաստեղծական աշխարհիքնկալումը անվանում էր <<բարացման մալուք>>, որը առավել մանրամասն դիտարկման մեջ հենց բանաստեղծի օգնությամբ

բացահայտվում է իբրև. <<Նախապատվություն տալ հանքանյութերին ,այլ ոչ բուսական ,կամ կենդանական աշխարհին>>:

Նման բանաստեղծական նախապատվությունը իրականում բավականաչափ խորհրդանշական է, թեպետ Պոնժը հերքում էր իր մետաֆիզիկական նկրտումները, այնուամենայնիվ, բանաստեղծությունը կենսականությունից և շարժումից դուրս տեսնելու ցանկությունն այստեղ նոր աշխարհընկալման հայտ էր:

Այդ աշխարհընկալման մեջ առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում <<ծնունդի>> մոտիվը, որն այս պարագայում ոչ երկուսն էր, ոչ արարչագործություն, այլ ինքնակա, ստատիկ ճշմարտություն , որն ուղղակի պետք է բացահայտվեր առանց կողմնակի միջամտության.

Պատրաստենք մի էջ,դրտեղ կարող է ծնունդ առնել

Ճշմարտություն, որն ուղղակի ճշմարտություն է....

Ահա այստեղ է Պոնժի մոտ հայտնվում/ PRE/ նախաձանցի գաղափարը,որ նշանակում է նախքան մարդու և բնության կերտումից առաջ ընկած ժամանակահատվածը. վիճակ, որից առաջ և հետո և ոչինչ չկա, և կա ամեն ինչ:

Այդ նույն նախակերտման գաղափարն է արծարծում ժամանակակից ֆրանսիական պոեզիայի մեկ այլ ակնառու ներկայացուցիչ Անդրե դու Բուշեն, որը բանաստեղծական լեզուն ընկալում էր իբրև խորհրդանշաններից և արհեստական գեղարվեստականացումից զերծ մի միավոր. <<Չի կարելի արտահայտել բառերով, քանի որ այն մի բան է, որ ստեղծվել է նախքան բառաստեղծումը>>:

Կոսմոգոնիկ այդ մոդելը իրականում ոչ միայն հակադրվում էր ումանտիզմին,այն նաև հակաէքզիստենցիալ աղերսներ էր կրում իր մեջ, քանի որ նախագոյ-ի թեման այս մոտեցման մեջ միաձուլվում էր նախաբառ-ի գաղափարին/՝ մի բան որ Ֆրանսուա Պոնժը համառոտ անվանում էր-PRE,իսկ Անդրե դե Բուշեն նույն այդ երևույթին տալիս էր ավելի ընդարձակ բնութագրում.<<Ես նորից գնում եմ այն ճանապարհը,որ սկսվել է ինձնից առաջ>>:

Միևնույն ժամանակ արտաքուստ խիստ անորոշ նախագոյի և նախալեզվի բանաստեղծական կերպավորումը թելադրում էր խիստ որոշակի կանոններ: Այդ կանոնները տեղ չգտան որևէ բանաստեղծական մանիֆեստում, ավելին, այդ ժամանակաշրջանում արդեն բանաստեղծական մանիֆեստները սկսեցին կորցնել իրենց ակտուալությունը: Դա պայմանավորված էր թե բանաստեղծական կանոնների համատարած ժխտմամբ, թե բանաստեղծական միությունների աստիճանական քայքայումով:Այդ տեսանկյունից առավել նշանակալից է դառնում բանաստեղծական այդ

սերնդի համահունչությունը, որը հիմնված չէր փոխադարձ քննարկումների կամ պայմանավորվածությունների վրա, այլ ավելի շուտ կոնցեպտուալ համաձայնություն էր բանաստեղծության նոր դերի շուրջ:

Այդ նոր դերը նախ և առաջ բացառում էր բանաստեղծական օբյեկտի և սուբյեկտի մեջ եղած կապը: Այդ բացառումը հանգեցնում էր ոչ միայն բանաստեղծական, այլև ընդհանուր լեզվական տրամաբանության ժխտմանը: Այդ տրամաբանությունը ֆրանսիական բանաստեղծներն անվանում էին <<Լոգոս>> և բնութագրում էին իբրև <<Մարմինն ու բնությունը աղավաղող հիմնական ուժ՝ մարդկային լեզու>>:

Այսպիսի մոտեցումն ինքնին հանգեցնում էր հետևյալ բնականոն զարգացումների.

ա/ Փոխվում էր բանաստեղծական բառապաշարը, որտեղ աստիճանաբար վերանում էին որակում և վերաբերմունք արտահայտող ածականները, իսկ ժամանակի ընթացքում նաև բայերը, որպես գործողություն արտահայտող բառեր: Ակնհայտ էր, որ անդեմ միջավայրում գործողության անհրաժեշտությունը հետզհետե նվազում էր, իսկ նախնական իրավիճակի մետաֆիզիկական պահանջում էր իրադարձությունների սառեցում, ոչ թե զարգացում:

բ/ Բանաստեղծությունը կառուցվում էր առավելագույնս <<անդեմ>> և <<ստատիկ>> գոյականների ընտրությամբ, ինպիսիք են. <<Ժայռ>>, <<ապառաժ>>, <<սուլոց>>, <<քամի>> բառերը, որոնց հաճախակի գործածությունը բացառում է փոխաբերականացման ցանկացած միտում: Այն հիմնականում միտված է նախաստեղծման մետաֆիզիկական պատկերի ճշգրիտ վերատադրությանը: Իսկ այդ բառերի արտաքուստ աննպատակ կրկնությունը կոչված էր պատկերելու մոնոտոն տիեզրական ուրիշը: Այդ առումով բնավ պատահական չէ <<օդ>> գոյականի շարունակական գործածությունը, որի նպատակն էր ամբողջացնելու <<անգոյության>> և <<անդեմության>>, ինչպես նաև <<թափանցիկության>> պատկերը, փաստելով բանաստեղծի առավելագույն զգացմունքային հեռացվածությունն իր զրվածքներից: Այս համատեքստում խիստ հատկանշական է այն փաստը, որ դւ Բուշեի հիմնադրած գրական պարբերականը կրում էր <<Օդեղեն>> /"L'Ephemere"/ վերնագիրը:

Իսկ բանաստեղծի երկերում ինքնության նպատակային տարրալուծումը հնչում էր հետևյալ կերպ.

Ես չգիտեմ, արդյոք ես այստեղ եմ, և կամ այնտեղ

Օդում եմ թե հողի վրա.

Մրանք օդի պատառներն են, որ ես պստում եմ խոսքերի պես....

Ֆրանսուա Պոնժն այդ անկյուք օդեղենի գաղափարը հասցրել էր առավել ծավալուն փիլիսոփայական մեկնաբանությունների, փորձելով առավելագույնս բացատրել տիեզրական այն մոդելը, համաձայն որի կառուցվում է նաև բանաստեղծությունը.

-Կա մի ինչ-որ մի ՆԱՖ: Բայց այն ծավալվում է շատ հեռու-հեռուներում: Եվ ինչպես այն կարող է պատկանել քեզ, երբ այն չկա: Եվ ինչպես լինել առանց խոսքի, առանց ելքի, առանց մեր իսկ բերանով արտաբերվածի, բառերի, ինչպես լինել առանց այդ բառերի մեջ լինելու...

Դա <<արմատների փնտրտուք էր>>, որը փորձ էր գտնելու այն, ինչ մնացել է նշանի հետևում: Այդ փորձն ուներ նաև մի հեռահար թիրախ՝ խզել նշանակվողի և նշանի կապը՝ այդ խզման մեջ գտնելով նախաստեղծ իմաստը:

Այստեղ բանաստեղծները հայտնվում էին մի երկիմաստ դրության մեջ, քանի որ պնդելով, որ բառանշանային թակարդը բանաստեղծական իմաստի ազավաղման գործիք է, նրանք միևնույն ժամանակ ստիպված են գործածել այդ <<կեղծ>> նշաններն իրենց երկերում:

Իհարկե, բովանդակային այս փնտրտուքի մեջ ինքնաբերաբար ձևավորվում էր նոր պոետիկան, որի առանցքային մոտեցումը <<բառերի դասավորության արվեստի>> լիակատար մերժումն էր: Այդ մերժումն ինքնին համարվում էր իրական բանաստեղծականություն, որտեղ հանգը, ուրիշը, մակդիրավորումն ու խորհրդանիշների օգտագործումը որակվում էին իբրև <<բանաստեղծական ցածր արվեստ>>: Դա այդ ժամանակի համար տարածված միտում էր, և բազմաթիվ պոետներ համակարծիք էին այդ խնդրի շուրջ:

Իվ Բոնեֆուան՝ մեկ այլ հռչակավոր ֆրանսիական բանաստեղծ, օրինակ, գովերգելով Անդրե դու Բուշեի նորարական ջիդը նրան անվանում էր <<նվազագույն արհեստավորը այլ բանաստեղծների մեջ>>:

Այդ ժամանակաշրջանի գրական ավանդույթներին համաձայն ար-հեստավորներ բանաստեղծության մեջ համարվում էին բոլոր այն բանաստեղծները, որոնք առավել կենտրոնանում էին բանաստեղծության վիզուալ էսթետիկայի վրա, շքեղությունը գերադասելով իսկությանը: Իսկ իսկությունը բառերից դուրս էր, և բառն էլ պետք էր իբրև յուրօրինակ չափում, որի եզրագիծն իրական բանաստեղծը պարտավոր էր հասնել.

Երբ ճանապարհը խոտորվում է,

Ես փոխում եմ քայլվածքս....

Մինիմալիզմի գեղագիտությունը մարդու ակտիվ և ստեղծագործական միջամտության ֆենոմենի բացառման հետ մեկտեղ՝ սկսում էր գեղագիտական լուծումներ փնտրել մանրամասների մեջ: Չնչյունական

նմանություններն, օրինակ, որոնք նախկինում գնահատվում էին իբրև պատահականություն, կամ առավելագույնս բանաստեղծական հնարանք, ալժմ հավասկնում էին դառնալ բանաստեղծական մոդելավորման հիմնական ուղենիշը: Ֆրանսուա Պոնժը հասուկ ընթերցողի ուշադրությունը բեռում էր PRE, PRES, PRET, PRESQUE բառերի հնչյունական նույնականության վրա, պնդելով որ հենց այս էտիմոլոգիական փնտրտուքի մեջ է ծնվում իրական բանաստեղծական հայտնությունը, որտեղ լստ նրա խոսքերի << միախառնվում են իրերն ու ձևակերպումները >>:

Անդրե դու Բուշեն ավելի կարճ ու շեշտակի էր բնութագրում բանաստեղծական այդ նորացումը. <<Բանաստեղծությունը համարյա ոչինչ է, խնդիրն այն է, ինչ ես հասկանում <<համարյա>> բառի տակ >>:

Տվյալ պարագայում << համարյա>> բառի տակ ամփոփված էին բանաստեղծության աշխարհաստեղծման հավակնություններն ու հնարավորությունները, որոնք իրենց մանրամասնումը պետք է ստանային տասնամյակներ հետո...

Annotation

The article touches upon the issues of esthetical minimalization and depersonalization in Modern French poetry. Prominent 20th century French poets Francois Ponge and Andre du Buchet have created a new poetics of modernity which indicates the new role of poetry in modern human perception. Word in poetry from mere means of expression turns into a certain borderline, beyond which the hidden meaning evolves....